

211. Երկբժնի ուսար Դարգանոսի արքային Տրովագայ, իսկ Իլոս ուսար Տրովսի որդւոյ Երկբժնի, յորոյ անուն կոչեցաւ քաղաքն Իլիոն: Ար սոցա շիրմօքն կանայք տրովացւոց յԻլիական մարտին պաղատանս վասն արանց իւրեանց հեղուին, գէսս 'ի նշանակ սոյոյ արձակեալ ըստ այնր ժամանակի սովորութեան:

214. Կասանդրա գեղեցկագոյնն 'ի դստերս Պրիամու, մարգարէուհի համարեալ:

219. Արածել զձիս էր գործ գերեաց: Տիթեան զաւակն է Դիոմեդ, և Լայերտեայն Ոգիսևս, երկոքին ևս անուանիք ընգգէմ արովացւոց:

221. Զի համարի քաղաքն Տրովագայ հիմնարկեալ յԱպոլոնէ, որ կոչի և Փիքոս, աջակցութեամբ Պոսիդոնի:

230. Մուրիկ կոյր, այսինքն Հոմերոս:

235. Իլիոն միանգամ 'ի հերակլեայ կործանեալ, միւսանգամ յԱմազոնաց, իսկ վերջին սպառնապուռ աւեր նորա պահեալ Պելեանց, այսինքն Աքիլեայ և որդւոյ նորա Պիւռոսի:

239. Արգիացի Թագաւորք, այսինքն իշխանք Ելլագայ, որ տասնամեայ մարտիւ յաղթեցին արովացւոց, և մինչև ցարդ հուշակին ընդ տիեզերս 'ի Հոմերոսէ:

240. Ովկիանոս համարեալ հայր գետոց և ջուրց, ուստի և ամենայն կենդանեաց. զի առանց խոնաւոյ չիք սերունդ:

## ՍՏԵՓԱՆ ՄՈՒՐԻԼԵՈՅ

### Ա

#### Նախաձաշիկ .

Բլասէնսիա Էսդրամատուրի գեղեցիկ պղտի քաղաք մըն է, և Մաւրիտա նացիք ուրիշ տեղ մը այնչափ երևելի շինուածներ չեն թողուցած, որչափ որ հոս: Ինչուան հիմա ճանապարհորդք պրանչացած կը կենան իր օձապտոյտ ճամբաներուն առջև ու կը դիտեն այն հարիւրաւոր սիրուն պալատները, վասն զի անկարելի է տուռնելու հասարակ անունը տալ այն շէնքերուն որ զարդարուած են աղուոր մանր քանդակներով, և աւելի արևելեան վճկի, քան թէ պարզ մահկանացուի մը ձեռագործ կ'երևան: Եթէ ինչուան մեր օրերն ալ այսպէս է, հապա մտածէ թէ ինչպէս պիտի տեսնուէր Բլասէնսիա վելտասաներորդ դարուն մէջերը, և ինչ տըպաւորութիւն պիտի ընէր երիտասարդի մը վառվռուն և բանաստեղծական երևակայութեան վրայ, որ Բիլլաս աւանին անպաճոյճ եկեղեցիէն և իր չորս կողմի խեղճուկ խողանաչէն տնակներէն զատ ուրիշ բան չէր տեսած: Զար-

մացած, ափշած, կամարէ կամար կ'երթար, ձեռքերը մերթ իրարու կը միացնէր, մերթ կը վերցընէր դէպ 'ի երկինք և այնպիսի բացազանչութիւններ կ'արձըկէր, որոնցմով Սպանիացիք իրենց ամեն յուզմանցը մէջ օգնութեան կը կանչեն արքայութեան բոլոր սուրբերը:

— Սուրբ Աստուածածին և սուրբ Յովսէփ, աս ինչպէս աղուոր է. տէր իմ՝ Յիսուս, ինչ գեղեցիկ տուն. սուրբ Ստեփանոս պաշտպանս, արքայութեան արժանի հրաշալիքներ են ասոնք:

Այս խօսքերը զուրցողը և այսպէս հիացողը Բլասէնսիոյ շէնքերուն վրայ՝ դեռ տասներհինգ տասներվեց տարեկան տղայ մ'էր, որուն երեսին վրայ կը տեսնուէր այն այրական և արևակէզ գեղեցկութիւնը որ սեփական է Սպանիոյ լեռնցիներուն: Մեծահասակ, կայտառ և բարեչափ, ամենէն պղտիկ շարժմունքներէն ալ բնական վայելչութիւն մը դուրս կը ցատքէր: Անտալուսիոյ գեղացւոց պէս շնորհալի զգեստ մը հագած, գոյնզգոյն բուրդէ պարկ մը զարկեր էր ուսը, որուն մէջ կը տեսնուէր որ խիստ քիչ բան կայ:

Երբոր ամեն տեղ պտրտեցաւ, ամեն բան տեսաւ ու ամեն բանի վրայ զարմացաւ, գնաց նստաւ վանքի մը սան,

դուխներուն վրայ, զետին դրաւ պարկը և զուարթութեամբ հաճարէ հաց մը դուրս հանեց մէջէն, որուն կեղևը մեծ սոխի մը քսեց, որ Սպանիացուց սիրելի կերակուրն է. յետոյ հացը երկու կտոր ըրաւ և սկսաւ խածնել մէկ կտորը այնպիսի ախորժակով՝ որ շուտ մը յարձրկեցաւ մէկալին վրայ ալ: Ուրիշ ճամբորդ մը որ քիչ մը աւելի տարւոք կ'երևար և որուն խեղճ զգեստը ամենին չէր նուազեցընէր իր ազնուական կերպը, կը նայէր այս անկուշտ հացը լափողին և վերջապէս բարձրաձայն ծիծաղ մ'արձրկեց երբոր տեսաւ որ կարգը հացին երկրորդ մասին եկաւ: Տղան նախ բարկացայտ աչքերը տնկեց անոր վրայ որ այնպէս ծաղր կ'ընէր զինքը. բայց նորեկ հիւրին զուարթութիւնը այն աստիճանն ազատ և հաղորդական էր, որ մտրեց այս պզտիկ բարկութիւնը և հաշտեցուց զտղան: Բարձրաձայն ծիծաղ մը եղաւ տղուն պատասխանը այն բարձրաձայն ծիծաղին՝ որ սկզբան զինքը զայրացուցեր էր, և վերջապէս հըրամցուց անձանթով որ իրեն հետ ընէ նախաճաշիկը:

Միւսը լուրջ միմոտութեամբ մը նա յեցաւ մնացած հացին վրայ.

— Թէ որ դուն աղէկ ախորժակ ունիս, ըսաւ, երիտասարդ ընկերս, կարծեմ որ ուրիշներու ախորժակին ամենին չես հաւտար. ինչ կ'ուզես որ ընեմ այս ողորմելի հացին կտորը, որուն վրայ ինչուան ցանկութեան և ցաւոց ալ նայուածքներ կը ձգես: Բայց հրաւէրք փոխանակ հրաւէրքի, դու ինծի հրամցուցիր կերակուրդ, ես ալ հրամցնեմ քեզի իմինս, կարծեմ որ ունեցած հացդ ուտելէդ ետքը դեռ բաւական ախորժակ պիտի ունենաս այս կարկանդակիս ալ պատիւ ընելու:

Այս ըսելով օտարականը հանեց պարկին մէջէն աղուոր խմորեղէն մը, որուն ոսկեգոյն կեղևը միայն տղուն բերնին շուրերը կը վաղցընէր, և ծրնկանը վրայ դնելով, հանեց զօտուոյն վրայէն պզտի տիկ մը որ լեցուն էր վալտէլ-Բէնաղի քաղցր զինուով: Անկէ ետ-

քը կարկանդակը արդարութեամբ երկու հաւասար բաժին կտրեց, և երկուքն ալ զործողութեան ձեռք զարկին, երիտասարդը իբր թէ ութ օրուընէ 'ի վեր բերանը ամենևին բան դրած չըլլար, իսկ տղան իբր թէ քիչ մը առաջ երեք լիպրէ կշռող հաց մը կերած չըլլար մէկ պատառով: Չմոռցան նաև երբեմն երբեմն զտիկը պատուելու, անանկ որ երկու բարեկամներուն երեսին գոյնը վառուեցաւ, աչուրնին սկսաւ ալ աւելի փայլիլ, և ուրախ զուարթ կը կանչէին կը կանչուրուտէին, երբ յանկարծակի վանքին դուռը բացուեցաւ շառաչմամբ և տեսնուեցաւ բոլորովին զինով մարդ մը՝ զոր կրօնաւոր մը կը հրէր, մանաւանդ թէ դուրս կը վճռուէր բարկութեամբ:

— Գնա կորսուէ, կը պոռար արեղան, կորսուէ ասկից, խեղճ ողորմելի, որ կը համարձակիս զինովցած կենալ այս վանքիս մէջ առանց պատկառելու այսպիսի սրբազան տեղէ մը և առանց ակնածելու քեզի յանձնուած կարևոր աշխատանքներէն. ելիր զնա բանդ, և չըլլայ որ մէյմ'ալ աչքիս երևնաս, չէնէ վախցիր եղբայր Արսէնին բարկութենէն: Ինչ պիտի ըլլան քու անկարգութեդ պատճառաւ վաղուան հանգիսին պատրաստութիւնները: . . . Իսկ դուք հոս ինչ բան ունիք. ինչուան երբ մենաստանի մը սանդուխները ձեզի պէս ստահակներու սեղանատուն պիտի ըլլան, վրայ բերաւ կրօնաւորը, զինովէն ունեցած բարկութիւնը երկու երիտասարդ օտարականներուն վրայ թափելով:

— Մի սրդողիր, հայր իմ, ըսաւ սրղան, մինչդեռ ընկերը կը փութար կարկանդակին կտորները ժողվելու, որպէս զի արեղային ոտքին տակ չերթան, մի սրդողիր, կը կարծէինք որ եղբայրս ըրութիւն քարոզող կրօնաւորները մեզի իբրև յանցանք մը երեսնիս պիտի չզարնէին իրենց դրան առջև նստած ըլլալնիս քիչ մը աւելի հանգիստ ուտելու համար:

— Շատ համարձակութեամբ կը խօ-

սիս , ըսաւ արեղան , որուն բարկութիւնը հետզհետէ կ'իջնար երիտասարդ լեռնայիին շնորհալիութեանը և աշխուժին առջև : Ի՞նչ է անունդ :

— Ստեփան . իսկ հրամանքի՞նդ , հայր սուրբ :

Այս ընտանի հարցմունքին արեղան զարմացած երեսը նայեցաւ , և քիչ մը կակազելէ ետքը իբր թէ ուրիշ անուն մը բերնէն պիտի փախցընէր՝ պատասխանեց .

— Եղբայր Արսէն . բայց դու ինձի մինակ մկրտութեան անունդ ըսիր , ի՞նչ է հօրենական կոչմունքդ :

— Անիկայ գաղտնիք է :

— Ինչո՞ւ համար :

— Վասն զի հօրս տունէն փախած եմ , և եթէ հրամանքիդ ըսեմ՝ անշուշտ պիտի յայտնես և զիս փնտռողներուն ձեռքը պիտի մատնես :

— Հօրդ տունէն փախելը շատ գէշ բան է . ի՞նչ պատճառով այսպիսի յանցանքի մէջ ինկար :

— Վէլապէզը երթալու տեսնալու և իրեն աշակերտ ըլլալու համար :

— Ուրեմն նկարիչ ես , հարցուց արեղան ժպտելով :

— Այո , պատասխանեց տղան , բարկացած այս արհամարհոտ ժպիտին վերայ , այո նկարիչ եմ , Յովհաննէս Գաւզիլեացոյն՝ հօրեղբօրս աշակերտը : Եթէ պատուական ազգականս մեռած չըլլար , դեռ երջանիկ կ'ըլլայի իրեն քովը , և լեռներ ձորեր անցնելու չէի ստիպուեր ուրիշ վարպետ մը գտնալու համար : Հօրեղբայրս զիս քովը առած էր և կը սորվեցընէր ինձի իր արհեստը . մեռնելէն ետքը հարկ եղաւ որ հօրս տունը դառնամ , որ երեք տարուրէն ի վեր կրկին անգամ ամուսնացեր էր Սպանիոյ ամենէն աւելի ազահ և անողորմ կնկանը հետ . . . : Խորթ մայրս ուզեց որ կօշկակարի քով մտնամ առանց հասկընալու որ նկարչութեան կոչմունք ունիմ , առանց խղճալու արցունքներու և յուսահատութեանս վերայ : Հայրս թէպէտ բարեսիրտ էր , բայց տկար ըլլալով համոզուեցաւ իրմէ

ու դրաւ զիս կօշկակարի մը խանութը : Երկու օր ետքը ճամբայ ինկայ ուրախ գուարթ և արագ քալելով , որպէս զի աւելի շուտ հասնիմ վէլապէզի տունը :

— Հետաքրքիր եմ հանճարդ փորձելու , ըսաւ արեղան , որ խիստ համ կ'առնէր տղուն շաախօսութենէն . ես ալ ճիշդ հարկաւորութիւն ունիմ նրկարչի մը՝ որ այն գինովին տեղը լեցընէ զոր քիչ մ'առաջ վանքէն դուրս վաճառեցի . թէ որ զիս գոհ ընես , թէ որ իրաւցընէ կրնաս քանի մը վահանակներ և զարդեր նկարել , քեզի ոսկի մը կուտամ . յանձն կ'առնո՞ւ :

— Ի՞նչ ըսել է . ոսկի մը . . . ան առտեն կրնամ լմնցնել ճամբորդութիւնս , և կը խոստովանիմ որ աս առաւօտ ունեցած վերջին ստակներս ծախեցի նախաճաշի հացս առնելու համար , երբ այս ազնիւ երիտասարդը վահանակներ թեմաք հրամցուց ինձի կարկանդակին կէսը և վալ-տէլ-բէնագին գինին : Ուստի , հայր սուրբ , եթէ կը հաճիս , ինքն ալ ընկերս կ'ըլլայ առաջարկած գործոյդ մէջ , ինքը գոյները կը պատրաստէ և կ'առնու հրամանքիդ ինձի տալիք ստակին կէսը :

Արեղան զարձուց աչուրները Ստեփանին ընկերոջը վրայ զոր դեռ չէր տեսած :

— Եթէ չեմ սխալիր , պատանի դու , երրորդութեան կրօնաւորներուն ձեռքով ազատուած գերիներուն զգեստն է հագածդ :

— Յիրաւի Ալճէրիէն կու գամ , յետ երեք տարուան միջոց գերութեան նեղութիւնները քաշելու : Աստուած ինձի շնորհք մ'ըրաւ և համառօտեց այնչափ երկար վշտակրութիւնս :

— Ի՞նչ էր քուկին արհեստդ բարբարոսաց ձեռքն իյնալէդ առաջ :

— Զինուոր էի :

— Նորէն զինուորութեան պիտի մտնաս :

— Ալ չեմ կրնար , վասն զի հրացանի հարուած մը թեւ ջախջախելով անկարելի է որ զէնք կարենամ գործածել :

— Ուրեմն ի՞նչ բանի ձեռք պիտի զարնես :

— Բանաստեղծութեան և վիպասանութեան :

— Բանաստեղծ և վիպասան . ի՞նչ կ'ըսես , ուրեմն դուք երկուքնիդ մէկտեղ արուեստաւորներու կարաւան մըն էք : ... Աղէկ ան ատեն , մինչդեռ ընկերակիցդ վահանակները նկարելու կ'աշխատի , դու ալ խորհրդակալն խօսքեր կը շարադրես վահանակներուն վրայ դնելու համար և իրեն պէս ոսկի մը կառնուս : Գճհ ես :

— Այո :

— Ձեզ տեսնամ ուրեմն , տղաքս , ներս մտէք և աշխատեցէք շուտով , վասն զի ինչուան վաղը կէս օր պէտք է որ ամեն բան պատրաստ ըլլայ :

Այս ըսելով , արեղան մտուց Ստեփանը և իր ընկերը եկեղեցւոյն դասը , ուր ամենայն ինչ պատրաստուած կ'երևար յուղարկաւորութեան հանդիսի մը համար : Սեւ լաթեր , վրանին արցունքի ճերմակ կաթիլներ ցանուած՝ սիւներէն կախուած էին , և տեղ տեղ արծաթէ փայլուն վարդէ ծաղիկներով վեր առնուած . բազմաջահեան աշտանակներ ամեն դիաց կը տնկէին իրենց մոմազարդ գլուխները մահուան ճրագալուցի մը համար , և դասին մէջ տեղը կը տեսնուէր դագաղ մը ոսկեհուռ զիպակով մը ծածկուած : Մինչդեռ երկու երիտասարդները բերաննին բաց կը նայէին այս տեսարանիս , կ'երևար որ արեղան կ'ուրախանար ինքիրմէ , և հեղինակի մը հաճութիւնը կը ցուցնէր որ ներկայ կը գտնուի իր շինած կատակերգութեանը փորձին՝ զոր քիչ ատենէն պիտի ձեացընեն :

— Ի՞նչ բանի համար են այս ամեն պատրաստութիւնները , հարցուց Ստեփանին ընկերը :

— Կարոլոս Հինգերորդին թաղմանը համար , պատասխանեց արեղան պարծենկոտութեամբ մը :

— Ի՞նչ կ'ըսես , ուրեմն կայսրը մեռաւ , աշխարհիս մեծագոյն հանճարներէն մէկը մարեցաւ . ներէ ինձի , հայր

սուրբ , զեռ երկու օրուրնէ՛ ի վեր Էւրոպա դարձած ըլլալուս , չէի իմացած այս սոսկալի բօթս : Ի՞նչ կ'ըսես . Կարոլոս Հինգերորդ մեռաւ . Սպանիա կորսնցնուց այն մարդը որ այնպէս մեծցուցեր և փառաւորացուցեր էր զինքը :

— Մխիթարուէ , երիտասարդ , Կարոլոս Հինգերորդ իր հոգին զեռ Աստուծոյ չէ աւանդած , հապա միայն աշխարհիս համար մեռած է . զգուելով մեծութենէ և իշխանութենէ , փառքէ յափրացած , թողուց զահը , ոտքին տակ առաւ կայսերական մականը , և պսակեց որդւոյն ճակատը թագով մը՝ որ շատ կը ծանրանար իրենին վրայ :

— Հայր իմ , զիս խաբել կ'ուզես . ոչ երբէք կարոլոս Հինգերորդ կայսրը այսպիսի սխալմունք մը կրնայ ընել . շատ աղէկ գիտէր կարգալ ուրիշներուն սիրտը , որով չէր կրնար չճանչնալ իր սիրտըն ալ : Կարոլոս Հինգերորդ առանց իշխանութեան , առանց գահու , առանց տիեզերաց՝ իր մէկ մատին նշանովը կառավարելու համար , ո՛հ , մարմին մը կ'ըլլար առանց կենդանութեան . ի՞նչ կ'ուզես որ ընէ այնպիսի զօրաւոր միտքը , այնպիսի ամենակարող կամքը , եթէ ինքզինքը անգործութեան տայ , նորէն կ'ըսեմ , հայր սուրբ , հետս խաղալ կ'ուզես :

— Սակայն զուրցածս իրաւ է . Կարոլոս Հինգերորդ կայսերական իշխանութիւնը մերժեց , ելաւ Մատրիտէն ու գնաց վանք մը քաշուեցաւ , կրօնաւոր եղաւ , և աշխարհքս ու իր ողբալի ունայնութիւնները բոլորովին մոռնալու համար՝ վաղը հոս սուրբ Յուստոսի եկեղեցւոյն մէջ պիտի կատարուի իր յուղարկաւորութիւնը ... և անկէ ետքը ալ Կարոլոս Հինգերորդի խօսքը պիտի չըլլայ ... պատմութեան մէջ՝ իրեն սնտի անունը միայն պիտի մնայ , իսկ այս վանքիս մէջ իր ցաւօք վարակեալ և արդէն գերեզմանի նուիրուած մարմինը , և հոգի մը՝ որ կը սպասէ անհամբերութեամբ այն ժամուն՝ յորում Աստուած զինքը իր գոգը պիտի ընդունի :

— Ալ մտքիս մէջ տարակոյս չմնաց

խօսքերուդ ճշմարտութեանը վրայ, հայր սուրբ . . . Ի՞նչ տխուր օրինակ մարդկային ոչնչութեան և մեր մտաց տկարութեանը . . . ո՞վ երբէք կրնար նախատեսել այս անակնկալ հարուածը . կարողոս Հինգերորդ կայսրը խելքը կորսընցնէ . . . խեղճ ըլլայ . . .

Աբեղային բարկութենէն երեսին գոյնը նետեց և ուժով մը բռնեց երիտասարդին թևը :

— Ի՞նչ կ'ըսես, անմիտ երիտասարդ, կարողոս Հինգերորդին խելքը գլուխն է :

— Չէ, հայր սուրբ, այս բանս անկարելի է . եթէ կարողոս Հինգերորդ Աստուծոմէ պատիժ ընդունած չըլլար, եթէ խելքը գլուխն ըլլար, ինչպէս որ կ'ըսես, ինքզինքը ասանկ Եւրոպայի և բոլոր աշխարհիս դիմաց խաղբ խայտառակ չէր ընէր : Եթէ կ'ուզէր այսուհետև կեանքը Աստուծոյ նուիրել և միայն իր հոգւոյն փրկութեանը պարապիլ, չէր կրնար ընել առանց կայսրութենէն հրաժարելու . . . : Սեպեմբ թէ գահը ձգելը խենթութեանը նշան չըլլայ, բայց այս կանխեալ յուղարկաւորութիւնը որ կ'ըսես, այս ծաղրական հանգէսը որ վաղը պիտի կատարուի, հոս սուրբ Յուստոսի վանքին մէջ, աւանդ, Աստուծո՛ւմ, այս ամեն բանս կարողոս Հինգերորդ կայսեր յիմարութիւնը չե՞ն ցուցնէր . միթէ այսպէս կատակերգակ կերպով կեանքը պիտի կնքէր : Չէր կրնար ինչուան վերջը նմանիլ Մեծին կարողոսի, որուն նախանձորդն եղած էր, և որուն թագովը պսակուած :

Յայտնի կը տեսնուէր որ երիտասարդին խօսքերը թէ ախորժելի և թէ միանգամայն ծանր կու գային արեղային, վասն զի մէյմը ճակատը կը կռննճմրտէր մէյմ՝ ալ կը ժպտէր :

— Մ'օրուքդ դեռ այնչափ չէ թանձրացած, երիտասարդ բանաստեղծս, որ կարենաս դատել կարողոս Հինգերորդին գործքերը : Սկսէ աշխատել և շարադրէ քեզի յանձնած խորհրդական խօսքերս, մինչդեռ ընկերդ պիտի նկարէ վահանակները որոնց վրայ պիտի դրուին կարողոս Հինգերորդին զինա-

նշանքը : Ստեփան, այս գրքիս մէջ կը գտնաս բոլոր քեզի պէտք եղածները . նայէ որ չմոռնաս կարողոս Հինգերորդին պատուանուններէն և ոչ մէկը, կայսր Գերմանիոյ, թագաւոր Սպանիոյ և Հնդկաստանի, թագաւոր Ստորին Նահանգաց, կայսր Հոլմայեցոց, թագաւոր Լոմպարտիոյ, և այլն : Այս իրիկուն նորէն կու գամ տեսնալու համար թէ արժանի էք ձեր վրայ ունեցած վրատահութեանս :

Աբեղան դուրս ելաւ, և երկու երիտասարդները սկսան աշխատիլ . Ստեփան դեղաւոր<sup>1</sup> և վրձինը ձեռքը, իսկ ընկերը դագաղին ոտքը նստած, գրուխը մէկ ձեռքին վրայ և միւսով թուղթերը սեւցընելով :

Բ

Աբեղան .

ժամ մը ետքը Ստեփանին ընկերը, որ խորունկ մտածութեանց մէջ ընկըղմած էր, իմացաւ որ ծանր ձեռք մը կը դրուէր ուսին վրայ . սրտազոզով մը գլուխը դարձուց ու տեսաւ որ արեղան էր, որ սովորական անհամբերութեամբը չէր կրցած ինչուան իրիկուն սպասել, ու եկեր էր երկու երիտասարդներուն ըրածը նայելու :

— Տեսնանք ուրեմն, բանաստեղծս, լմնցուցիր շարադրութիւնդ :

— Չէ, հայր իմ, անկարելի կ'ըլլայ սկսիլ . կարողոս Հինգերորդի կայսերական թագէն հրաժարելու և իր աստիճանին անվայել՝ վաղը հոս տեղ կատակերգութիւն մը խաղալու մտածութիւնը՝ զիս կը տխրեցնէ, և թող չտար որ մէկ յանգ մը միայն կարենամ գտնալ :

— Չափազանց խստութեամբ կը դատես կարողոս Հինգերորդը, երիտասարդ դու . ի՞նչ, փառքէն և աշխարհքիս բաներէն ձանձրացած ըլլալուն մեծ և շքեղ հաւաստիքը զոր պիտի տայ բոլոր եր-

1 Գ. Պ. Palette որ պատկերահաններուն ձեռքի բռնած գոյներու տախտակն է :

կրիս՝ կատակերգութիւն կը կոչես : Կարողս հինգերորդին իշխանութենէ հրաժարելէն ետքը արդեօք կրնայ զտնուիլ վաղուրնէն աւելի փառաւոր տեսարան մը :

— Իրաւունք ունիս . . . բայց ասիկայ տեսարան մըն է ինչպէս որ հրամանագրաւ կ'ըսես . և եթէ կայսրը իր աթոռէն հրաժարելուն վրայ զղջացած չըլլար , ամենևին խեղճին չէր փշեր որ ատանկ ինքզինքը նշաւակէ : . . . Թէ որ բացարձակապէս կ'ուզէր որ իր կենդանութեան ատեն ննջեցելոց պաշտօն կատարուի վրան , դարձեալ հարկ չկար որ այսչափ մեծ հանդէսով ընէր բոլոր պալատականաց առջև , որոնք մասնաւոր աս բանիս համար Մատրիտէն ելլային գային :

— Արեղան մեծ մեծ կը քալէր , տըժգոհ , խռովեալ և մտածութեանց մէջ ինկած . վերջապէս պէտք եղաւ որ նըստի , վասն զի ձախ սրունքին վրայ սաստիկ ոտնառութեան ցաւ մը զգաց . այն ատեն նշան ըրաւ նկարչին որ առաջ գայ :

— Ինքզինքը բանաստեղծ անուանող ընկերդ մէկ տող մըն ալ չէ կրցած գրել . գու որ ըսիր թէ՛ նկարիչ ես , աղէկ բան մը կրցար շինել , չէ՛ նէ դուն ալ չունեցած հանճարիդ վրայ պարծեցար :

Ստեփան առաջ եկաւ վախվխելով , ձեռքն ալ վահանակներէն մէկը բռնած . արեղային ճակատը պարզուեցաւ :

— Ապրիս , շատ աղէկ ըրեր ես . . . : Պատանի դու , Գիցիանոյ և Վէլապէզքու տարիքդ եղած ատեննին ստուգիւ ասկից աղէկ չէին շիներ : Փոխանակ մէկ ոսկիի քեզի տասը ոսկի պիտի տամ , վասն զի չեմ ուզեր որ ազրատութեան մէջ իյնաս ու չկարենաս հանճարդ բանի բերել : Բայց ի՞նչ կ'ընէ հոն բանաստեղծը որ շուտ շուտ թուղթերը կը լեցընէ , մինչդեռ քիչ մը առաջ և ոչ գիր մը կրցեր էր գրել :

— Վաղուան հանդիսին վրայ երգիծանութիւն մըն է :

— Տեսնանք ատ երգիծանութիւնը , կարգա :

Երիտասարդը դեռ շարագրութեան խանդովը բոլորովին տաքցած , մօտեցաւ արեղային և կարդաց աշխուժով ոտանաւորը . բարակ , կծու , հանճարով և դառնութեամբ լի գրուածք մըն էր : Արեղան հանդարտութեամբ մտիկ ըրաւ ինչուան վերջը . մերթ հաւնելունչան կ'ընէր և մերթ կը զայրանար , և երկու իրեք անգամ ընթուինները պուրստեց յայտնի տժգոհութեամբ :

— Այս ոտանաւորդ իբրև բանաստեղծական գրուածք արժանի է գովութեան , և տաղանդաւոր հեղինակ մըն ես , բայց ըրածդ կտրիճ և արդարակորով մարդու գործ է . կը համարձակէիր այս տողերս գրել կարողոս Հինգերորդի թագաւորութեանը ժամանակ : Ասիկայ առակին ըսածին պէս՝ օրհասական առիւծուն արացի հարուած մը չէ :

Բանաստեղծը պատուեց թուղթը և ցիրուցան մէկդի նետեց կտորները :

— Շատ աղէկ ըրիր . հիմա հաշտուեցանք իրարու հետ . բայց երեկոյեան ժամերգութեան ատենը կու գայ . Ստեփան լմնցուցեր է իր վահանակները և ալ չենք կրնար երկայն ատեն հոս մէկտեղ կենալ : Գացէք գեղին պանդոկներէն մէկը պառկելու և վաղը եկէք որ յուզարկաւորութեան հանդիսին ներկայ գտնուիք : Ասանկով Ստեփան կրրնայ դատել իր վահանակներուն ըրած արգասիքը , և ժամանակաւ կրնայ նկարել տեսած վեճի և ահաւոր արարողութեան պատկերը : Ետքէն միտքս դրած եմ որ դրեզ , Ստեփան , ներկայացնեմ և յանձնեմ Վելապէզին . իսկ դրեզ , երիտասարդ , Փիլիպպոս Բ թագաւորին :

— Փիլիպպոս Բ թագաւորին . ուրեմն կը ճանչնաս զինքը , հայր սուրբ :

— Այո , շատ աղէկ կը ճանչնամ ու կը յուսամ որ խօսքս դիմացը կ'անցնի . ասենօք միայն իմ ուզածս կ'ընէր : Գիշեր բարի . Աստուած հետերնիդ ըլլայ :

Ստեփան և իր ընկերը սկսան դէպ 'ի վանքին դուռը երթալ , երբոր քիչ մը ատեն ցած ձայնով խօսակցելէ ետքը ,

մէկերնին դարձաւ արեղային քովը, որ հաճութեամբ մը կը դիտէր սև լաթերը և դադաղը :

— Հայր սուրբ . . . :

— Ի՞նչ կ'ուզես, շուտ ըսէ, վասն զի կը լսեմ որ վանականները դաս կու գան :

— Կը վախնանք որ չըլլայ թէ զմեզ պանդոկը չընդունին . . . : Արդեօք կըրնայիր տալ նկարած վահանակներու համար խոստացած ոսկիդ :

— Մէկ չէ հապա տասը ոսկի խոստացայ, ըսաւ արեղան, և ձեռքը զրպանը խոթելով երկու երեք մանր ստակէ զատ ուրիշ բան չգտաւ . խնտալն եկաւ այս բանիս վրայ :

— Այսօրուան ունեցածս այսչափ է . հանդիսին ծախքերը զիս մոխրի վրայ նստուցին, բայց վաղը քսան հազար տուգադի թոշակիս չորրորդ մասը պիտի վճարեն ինձի, և պարտքս քեզի կը հատուցանեմ հանգստեան պաշտօնէն ետքը : Երբոր լմնայ՝ եկեղեցին կեցիր ու սպասէ ինձի . . . :

Կրօնաւորները այս ատենս դասը դալով և տեղերնին բռնելով, արեղան ալ շուտ մը գնաց մտաւ մէջերնին, և թողուց երկու երիտասարդները որ իրարու կը նայէին հեգնական ժպիտով մը :

— Հայր սուրբը մեզի բուռ բուռ ոսկի կը խոստանայ և քսակին մէջ բան չունի որ մեզի պէս խեղճ արհեստաւորներու բնակութեան և կերակուրին ստակը տայ, ըսաւ բանաստեղծը, մանր ստակները ձեռքին մէջ հնչեցնելով : Հոգ չէ, կարկանդակին կեղևը մեզի իրիկուան ընթրիք կ'ըլլայ, և այս ստակով կը լեցընենք գինւոյ տիկս, և եկեղեցւոյն սանդուխները մեզի անկողնի տեղ կը ծառայեն, վասն զի գիշերը գեղեցիկ կ'երևայ . . . :

Այս կերպով վաղը առտու մենք ամենէն առաջ եկողները կ'ըլլանք հանդիսին, որուն համար այսչափ հոգ կ'ընէ խեղճ արեղան և այսչափ կը չարչարուի :

Գ

Եկեղեցին .

Երկրորդ առաւօտը շատ ուշ արթընցան մեր երկու բարեկամները, չկրնալով քուններնին շարունակել եկեղեցւոյն դռներուն ճանչելէն, որ կը դառնային իրենց ծխնիններուն վրայ ամբողջ բացուելու համար : Հանդիսին մոմերը վառուած էին արդէն և կրօնաւորները քահանայական զգեստներ հագած՝ պալատականաց գալուն կը սպասէին որ դաս մտնան : Ստեփան և իր ընկերը շուտ մը եկեղեցին մտնալով՝ դացին կեցան մթկեկ անկիւն մը, որպէս զի առանց տեսնուելու կարենան աղէկ մը տեսնալ հանդէսը :

— Երբոր բազմութիւնը լեցուի ոչ ոք զմեզ հոս պիտի տեսնայ, ըսաւ երիտասարդ նկարիչը, և պիտի կարենամ հանդիստ կերպով ուրուագրել այս հետաքրքրական տեսարանիս պատկերը : Աղէկ բախտի հանդիպեցանք, և շատ կ'ուրախանամ մտածելով որ պիտի տեսնանք թագաւորը, բոլոր մեծամեծները, կարողոս Հինգերորդին արքունեաց բոլոր խաթունները, ամենէն աւելի զկարողոս Հինգերորդ . . . : Ո՛հ, երբ պիտի կարենամ դիտել ուզածիս պէս այն ընդարձակ և զօրաւոր ճակատը որուն մէջէն այնչափ մտածութիւններ ելան և տակն ու վրայ ըրին զաշխարհ : Արդեօք ուր և ինչ դիրքի մէջ պիտի կենայ իր յուզարկաւորութեան նորօրինակ հանդիսին ժամանակը : Բայց ահաւասիկ արեղաները դաս կը մտնեն, ու միայն մե՛նք ենք եկեղեցւոյս մէջ : Ո՛ւր են հապա թագաւորը, պալատականները և այն խուռնընթաց բազմութիւնը զոր երեկ հայր սուրբը մեզի խոստացաւ . և սակայն յուզարկաւորութեան հանդէսը կը սկսի, քահանաները խորանը կ'ելլան, և երգիչները ժամամուտը կ'երգեն :

Իրօք հանգստեան պաշտօնը սկսաւ և եկեղեցին պարապ էր բոլոր պատա-

րագին ատենը : Ոչ որ եկաւ թագաւո-  
րական գահը նստելու , որ պատրաս-  
տուած էր փիլիպպոս Բ՛ համար , ոչ որ  
երեցաւ աթոռներուն վրայ զորոնք շա-  
րեր էին մեծամեծներուն և խաթուն-  
ներուն համար :

Որդին ամենևին չէր յիշած որ հայ-  
րը իրմէ աղօթք կը խնդրէր . պալատա-  
կանները մոռցեր էին որ կայսրը՝ որուն  
այնչափ ատեն մէկ նայուածքը մուրա-  
ցեր էին՝ զիրենք իր քովը կը կանչէր :  
Մեծ և ահաւոր բան էր իրաւցընէ այս  
խոր միայնութիւնը , այս ապերախտու-  
թեամբ երես չնայիլը , այսպէս արհա-  
մարհանօք և անգթութեամբ վարուիլը  
անոր հետ՝ որ երբեմն կարողոս Հինգե-  
րորդ եղած էր : Ինչպէս առջի օրը խօսք  
դրած էին , Ստեփան և իր բարեկամը  
հանդիսէն ետքը երբոր կրօնաւորները  
դասէն ելան՝ եկեղեցին կեցան արեղայ-  
ին սպասելու համար . . . : Մէյմ՝ ալ հա-  
ռաչանքներ լսեցին դադաղին մէջէն ,  
մահուան ծածկոցը շարժեցաւ և դող-  
դողուն ձեռք մը մէկդի առնելով զանի-  
կայ՝ տփզոյն երես մը դուրս ելաւ , ո-  
րուն վրայ թէ ցաւ և թէ դաժանու-  
թիւն նկարուած էր . . . Աբեղան էր որ  
նախընթաց օրը ննջեցելոց պատարա-  
գին պատրաստութիւնները կը տես-  
նար . բայց երիտասարդները երկիւղա-  
խառն յարգութեամբ մը ետ ետ գացին :

— Ո՛չ որ , հառաչեց արեղան , կար-  
ծելով որ լսող չկայ , ո՛չ որ . . . ո՛չ որ յի-  
շեց զկարողոս Հինգերորդ : Ո՛վ ահաւոր  
ոչնչութիւն մարդկային մեծութեանց :  
Աստուած իմ , Աստուած իմ , համառօ-  
տէ այսպիսի դժնդակ և սաստիկ ցա-  
ւերս . զիս քովդ առ :

Ու լաթը բոլորովին վրայէն նետելով  
ելաւ դադաղէն և գնաց խորանին առ-  
ջև , ծունկ դրաւ , ու սկսաւ աղօթել  
արտասուօք և հեծութեամբ :

Սակայն բանաստեղծը և նկարիչը ալ  
չէին համարձակեր քովը երթալու ,  
վասն զի հիմա իմացան որ կարողոս Հին-  
գերորդն էր անիկայ : Յետ երկայն և ե-  
ռանդնայից աղօթքի մը , եղբայր Արսէ-  
նը աչքերը չորս դին դարձուց , ու տե-

սաւ վերջապէս Ստեփանը և իր ընկե-  
րը , ու նշան ըրաւ որ գան : Երկուքն ալ  
հնազանդեցան դողդալով ու կայսեր  
ոտքը ինկան . կարողոս ձեռքը երկնցուց  
և ոտք հանեց զիրենք :

— Ինձի մի ընէք այս յարգանքներս ,  
տղաքս . կը տեսնաք որ թէ աշխարհքիս  
և թէ Աստուծոյ համար ես ուրիշ բան  
չեմ՝ բայց եթէ եղբայր Արսէն . Ինձի  
համար և ոչ մեռելոց յիշատակը կ'ը-  
նեն , և հողուոյս հանգստեանն համար  
աղօթող մը չեղաւ , և ոչ 'ի խորոց  
կարդացի մը ըսող . . . : Ստեփան , առ  
այս ժամացոյցս . առջի հարստութենէս  
մնացած ուրիշ բան չունիմ : Փիլիպպոս  
Բին գանձապետը տասնըհինգ օր ան-  
ցաւ և դեռ չվճարեց թոշակիս չորրորդ  
մասը . երկու հարիւր յիսուն տուգադ  
մը չիկրնար ինձի տալ : Ասկէ զատ վե-  
լապէզդին ալ պիտի գրեմ աղաչելով որ  
զքեզ քովը առնէ : Ի՛նչ է նայինք ա-  
նունդ . հիմա պէտք է գիտնամ որ կա-  
րենամ վէլապէզդին գրել : Ամենևին  
մի վախնար որ զքեզ մատնեմ , ըսաւ  
խնտալով , հօրդ չեմ իմացներ :

— Ստեփան Մուրիլեոյ , Տէր իմ :  
— Իսկ քեզի , բանաստեղծս , ի՛նչ կրը-  
նամ ընել . դու ալ տեսար որ արքու-  
նեաց մէջ ալ խօսքս չանցնիր , և իմ  
յանձնարարութիւնս փոխանակ օգտա-  
կար ըլլալու քեզի՝ հալածանաց պատ-  
ճառ կրնայ ըլլալ , ինչպէս Բարթողի-  
մէոս լարանկա խոստովանահօրս կ'ը-  
նեն : Այո՛ , կայսրն կարողոս Հինգերորդ  
և Արսէն արեղայն բաւական ուղղա-  
փառ չեն երևար սրբաբնութեան և փի-  
լիպպոս Բի :

— Տէր իմ , ըսաւ երիտասարդը , հրա-  
մանքէդ երկու խնդիրք ունիմ , երկու  
խնդիրք որ զիս ուրախութեամբ և պար-  
ծանքով պիտի լսեն :

— Ըսէ՛ . կը կատարեմ :  
— Առաջինը որ թողութիւն ընես ե-  
րեկուան հրամանքիդ ըսած անմիտ խօս-  
քերուս :

— Բոլորովին մտքէս ելան . . . :  
— Երկրորդն է որ թող տաս վեհա-  
փառ ձեռքդ համբուրելու :

— Եկուր ուրեմն գիրկս . բանա-  
ստեղծ մը և զինուոր մը արժանի են կայ-  
սեր մը ողջագուրանացը : Երթաք բա-  
րով , տղաքս , գնացէք մտէք յաշխարհ .  
երանի թէ արհեստները ձեզի այնպի-  
սի փառք մը տան որ կայսերական գա-  
հուն տուածէն պակաս վշտալի ըլլայ :  
Երթաք բարով , և ատեն ատեն մըտ-  
քերնիդ բերէք եղբայր Արսէնը :

— Ոչ երբէք Միքայէլ Սէրվանդէս  
պիտի մոռնայ այս օրս , ըսաւ բանա-  
ստեղծը , ծնկան վրայ գալով կայսեր  
առջև . Ստեփան Մուրիլեոյ ալ իրեն հե-  
տևեցաւ : Կարոյոս Հինգերորդ ձեռուը-  
ները տարածեց գլխընուն վրայ և զի-  
րենք օրհնեց :

Յետոյ արցունքը սրբելով մտաւ խը-  
ցիկը :

Կը շարունակուի :

Ա Յ Ղ Ա Ն Ք

Աֆղանք՝ որոնց ծագումը յետ ուշի  
ուշով քննելու զիտնականք՝ դեռ ան-  
ստոյգ կը համարին՝ զլիսաւոր երեք  
ճիւղ բաժնուած են , ու բազմաթիւ ցե-  
ղեր : Պերսոտուրանի ցեղը երկրագործ է  
և կը բնակի Հինտուքուհի լեռան ձո-  
րերուն և բլուրներուն մէջ . և որովհետև  
իրեն անման և բազմանալուն համեմատ  
չկրնար իր երկիրն ալ ընդարձակել՝ այն  
պատճառաւ գժտութիւնները և արիւ-  
նահեղ պատերազմները անվերջանալի  
են մէջէն . նոյն վիճակն ունի նաև Եռն-  
սուֆզաի և կամ Եռսուֆի որդի ցե-  
ղը իր ռամկապետական վարչութեանը  
պատճառաւ . ասոնք Պերտուրանինե-  
րուն մերձաւոր են՝ և բնակութիւննին  
300 տարուան ստացուածք է : Քաղաքք,  
Օդմանքիալք և Գուրքոյակիք ալ առ-  
ջիններուն պէս կուուոյ հետ են , և ա-  
նոնց սահմանակից : Աֆղաններուն մէ-  
ջէն միայն այս ետքինները իրենց գե-  
րեացը վրայ բացարձակ տիրութիւն և

ուզած անգթութիւննին կը բանեցը-  
նեն և ինչուան անոնց կեանքն անգամ՝  
ձեռուընին առած են : Գերեաց գործա-  
ծութիւնը , թէպէտև սովորական է Աֆ-  
ղանաց մէջ՝ բայց ասոնցը աւելի ծա-  
ռայք կրնան ըսուիլ քան թէ գերիք .  
երկրագործութեան կը զբաղին , կերած-  
նին և հագածնին շատ անգամ իրենց  
տէրերուն պէս է , և ինչուան կալուածոց  
ալ տէր կրնան ըլլալ : Քուհի-Սուլէյ-  
ման լեռան բնակիչները Շիրուսի և Վի-  
զիրի կ'ըսուին . յափշտակութեք կ'ապ-  
րին և իրենց երկրէն անցած կարաւան-  
ներուն վրայ հարկ կը դնեն : Ասոնց ա-  
րևմտեան կողմը կիլիսիան Տուրանիները ,  
որոնց անունը Անմետ Շահէկ ելած է .  
վասն զի Ահմէտ-Շահն որ էր այս ցե-  
ղէն՝ ըսուած է Շահի տուրի տուրան .  
այսինքն քաղաւոր աշխարհաց աշխար-  
հի : Ասոնց ալ հիւսիսային կողմը կ'իլ-  
նան Կիլիսիները , որոնք անուանի եղած  
են վերջի դարուս մէջ իրենց Պարսից  
դէմ կանգնած յաղթութեանց պատ-  
ճառաւ : Հազարէն ցեղն ալ անուն հա-  
նած է երգոց , բանաստեղծութեան և  
որսորդութեան վրայ չափազանց սէր  
ձգելուն համար :

Հնդկաստանցիք Աֆղանաց Բիդաւն  
կամ Բադաւն անունը կու տան որ Բուշ-  
դաւնէ բառին ազաւաղեալն է , և Աֆղա-  
նաց բուն անունը : Բայց ինչպէս շատ  
տգէտ և անգրական ազգեր տաճկու-  
թիւնը ընդունելէն ետքը՝ ազգութիւն-  
նին ալ կորուսեր են՝ նոյնը եղած է Աֆ-  
ղաններուն ալ . կուրանի զաղափարաց  
և հրէական ցնորարանութեանց վրայ  
ձուլուած , իրենք զիրենք յԱսորեստան  
գերեալ Հրէիցմէ սերած կը համարին :  
Լեզունին Բուշդուռ կ'ըսուի և երեք բար-  
բառ ունի . Տուրանի , Պերտուրանի և  
Բադաւնի . այս բարբառները ոչ միայն  
հնչմամբ կը զանազանին իրարմէ , այլ  
և բառերով : Բուշդուռ լեզուն խիստ՝ բայց  
ուժով , արևելեան լեզուաց ընտանի ա-  
կանջներու ախորժական է , թէպէտև  
ծագումն անստոյգ՝ բայց կան որ քաղ-  
ղէտրենի շատ նմանութիւն ունի կ'ը-  
սեն . ունի նաև սանպրիդէն առած բա-